

ՎԵՐԱՇՆՈՒԹԻՒՆ

Հասցե՝
Rédaction du journal
VERADZNOUSTIOUN
ROUSTCHOUK (Bulgarie)

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱՄԷՆ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ժրակ, վեցսանույ 5 Ժրակ.

Գրութիւնները եւ լին դարձուիւր.
Ծանուցումի տողը՝ 20 սանթիւն.

ՍՕՑԻԱԼԻՉՍԸ

— 0 —

Վերջին մէկ-երկու տարին սոցիալիզմն առանձին յամառութեամբ գրաւել է հայ յեղափոխական մտքերը։ Հին սոցիալ-դէմոկրատ, մենք միայն կարող ենք հրճուանք զգալ այդ տեսարանի առաջ, որքան էլ նկատենք այնտեղ, գրութիւններու ու պատահական բանականութեամբ, ու մանց մէջ պատանեկան փութկոտութիւն, թէ միայն իրանք են ճշմարիտ սոցիալիստները և միւսները մէջ՝ յաւանտար հայեացքներ բաւական զգալի խառնաշըփութեամբ հանդերձ։ Երկու կողմն էլ, սակայն, կարծում են — և անշուշտ անկեղծօրէն — որ իրանք նոր Ամերիկայի գիւտ աբաթ լինեն հայութեան մէջ։ Բայց մէկի փութկոտութիւնը, միւսի յաւանտարութիւնը նշանակութիւն չունեն, միայն թէ Գաղափարն առաջ ընթանայ, միայն թէ նա յաղթէ ըմբոստ մտքերը։

Այդ գաղափարն առաջին անգամ փայլեց հայութեան գլխին սրանից ամբողջ տասն և հինգ տարի առաջ՝ «Հնչակում»։ Միծաղ մի կողմից, յարձակումներ միւս կողմից տեղացին այդ թերթի գլխին հայութեան ամեն խաւերից։ Երբ «Հնչակը» յայտարարեց, որ նա յեղափոխական է, որոպէսեւ սոցիալիստ է, յարաբերած սխալներն անկարգաբար լինէր։ Մինչդեռ այսօր... Այսօր գաղափարը չա՛տ ճանապարհ է անցել, և կը գայ օրը, երբ հայ մտքերի վրայ սոցիալիզմը կը ծանրանայ իբրև անհրաժեշտութիւն նոյնպէս, ինչպէս ժամանակին ազգային յեղափոխական ոգին։ Եւ այժմ արդիւնքումն է քննարկները միմեկին դէմը։ Եւ այժմ արդիւնքումն է գաղափարի ճշմարիտ և անմահ յաղթանակը։

Չը նայած ծիծաղին ու յարձակումներին և միամիտներին երկու կողմն սոցիալիզմն անուան առաջ, չը նայած Հնչակեան կուսակցութեան ներքին յայտնի տարրի անկեղծ հակառակութեան, չը նայած, վերջապէս, մէկ այլ կարգի նստելիքէնտ խելամիտների օպ-

պորտիւնիւրին թէ ոպէտք չէ խրտնեցնել հասարակութեանը — Հնչակեան մամուլը (որ «Հնչակ», «Գաղափար» ամսագրերը, բնութիւնները) սկսելով շարունակեց քարոզել սոցիալիզմը և շնք թափեց այդ ուղղութեամբ խմորել մտքերը և կազմակերպել ոյժերը հայ բանուորների Ամերիկայում, Կովկասում, Յունաստանում, որոնց աւելի մատչելի էին սոցիալիստական գաղափարները։

Հնչակեան կուսակցութիւնը երեւան եկաւ իբրև սոցիալիստ-դեմոկրատներ, որոպէսեւ իր համոզումն էր, քաղաքակիրթ մարդկութեան ներկայ հասարակական կազմը, շնորհով հանրակեցութեան յայտնի ձևերի և նրա ոյժերի պատմական որոշ գարգացման, յեղաշրջելով ընթանում է դէպի մի նոր, աւելի հասուն հասարակական կազմ և որ այդ շարունակական զարգացման մէջ է կայանում քաղաքակիրթ մարդկութեան անվարձան առաջընթացութիւնը և ապագայ բարեկեցութեան գրաւականը։ Եւ ո՛րն է այդ նոր կազմը։ Այդ մասին Հնչակեան Մրագրում կարդում ենք հետեւեալը։

«Ներկայ քաղաքակիրթ մարդկութեան հասարակական կազմաւորման կողմէ կազմակերպութեան պայմաններն, իրանց զարգացման ընթացքում, իրանց արգանդից, իրանց ձեւերի միջից բնական կերպով ծնունդ են տւել ու առաջացրել սեփականատիրութեան մի նոր ձեւի ամեն մտաւոր ու նիւթական տարրերը։ Այդ նոր ձեւն է՝ անդիւնարութեան բոլոր միջոցներով ու արդիւնքի սեփականութեան հաւաքական (collectif), համայնական ձեւը, որով նրանք կը լինեն ընդհանուր սեփականութիւն արդիւնքներով հասարակութեան» *)

Մասնաւորելով սոցիալիստական խնդիրը հարազատ ժողովրդի վերաբերութեամբ, Հնչակեան կուսակցութիւնը հէնց սկզբից իր Մրագրի զրեց ընդարձակ հիմունքներով վրայ։ Նա չը նկատեց պատմական րօպէի պահանջն իբրև գուտ ազգային անկախութեան (Թիւրքաց-Հայաստանում) մի պահանջ, ո՛չ և իր Մրագրում պարզելով սոցիալիզմի պատմական ու

*) Տես Մրագիր Հնչակեան կուսակցութեան (երկրորդ հրատարակութիւն, 1897 թւի), բաժին Ա.

հասարակական հիմունքներն ու կազմը, նա եզրակացում է այսպէս. —

«Դա՛ է այն հասարակական կազմակերպութիւնը, որ երեք յիս անհրաժեշտ ընդհանուր նայ ժողովրդի վերաբերութեամբ, իբրև իր ձգտումներ ի դէպ, իբրև հեռաւոր նպատակ դրել է իրան «Հնչակը» և Հնչակեան կուսակցութիւնը» *)

Այսպէս, պարզ է, որ հայ հասարակական գործը նա չէ բաժանում սոցիալիզմից և նրա ծաւալը տարածում է արժողջ հայ ժողովրդի վրայ։

Յետոյ։ Հայութեան ո՛ր տարրը և ի՞նչ եղանակով պէտք է գործէ, ձգտելով հասնել սոցիալիստական կազմակերպութեան։ Դա ամենաառաջնակարգ հարցերից մէկն է, որի պատասխանն էլ պէտք է որոշող լինի իսկական սոցիալիստական հայեացքի ու գործունէութեան։ Եւ այդ տեսակէտից էլ Մրագրի պատասխանը որոշ է։

Ահա, — «Իրա՛յն պատմական նպատակն ու գործն իկատարածելու համար ամեն քաղաքակիրթ երկիրներում՝ արդիւնարեւոր դասակարգը պէ՛տք է կազմակերպել իրեն քաղաքակրթ ինքնակազմակերպութեան տակ գտնւած ամեն հասարակական ու քաղաքական միջոցները գործ դնելով և յոր երկիրներից իրար հետ միասնաբար, ձգտել կատարել կոմունիստական, սոցիալական յեղափոխութիւնը» **)

Դարձելով սոցիալիստական կազմակերպութեան հիմունքները, Մրագիրը յայտարարում է նաև. —

«Դա՛ է արդիւնարեւոր դասակարգի պատմական ձգտումն ու նպատակը կապիտալական արդիւնարութիւն ու նեցող ամեն երկիրներում. դա՛ է այդ երկիրների նաեւ սոցիալիստ-ոսովակարականների (սոցիալ-դեմոկրատների) ձգտումները նպատակակէտը» ***)

Որպէսզի լիովին որոշենք, որ Հնչակեան Մրագրի պահանջած գործունէութիւնն էլ նոյն այդ է, թող ընթերցողը մեզ թոյլ տայ Մրագրից քաղել մի հատուած, որ պատասխան է հետեւեալ առաջնակարգ ու հիմնական հարցերին։ Ո՛րն է Հնչակեան մեկնութիւնը

*) Տես նոյնը։
**) Տես նոյնը։
***) Տես նոյնը։

հայկական ներկայ իրականութեան և ապա՝ ո՛րն է այն անմիջական նպատակը, որի իրագործման համար «Հնչակը» հաւէր էր կարողում առաջ բերել անմիջական գործունէութիւն։ Ահա Մրագրի խօսքերը. —

«Հայ ժողովուրդը ներկայումս գտնւում է միապետական-քաղաքական, կարգերի տակ, որոնց կառավարական հարկային ու ֆինանսական սխալներն աւերել են նրա համար. նա գրտնւում է նաեւ այնպիսի տնտեսական միջոցներով, երբ մի կողմից սկսել են ծագել արդիւնարութեան կապիտալական կերպեր և միւս կողմից շարունակ ընկնում ու քայքայւում են տնտեսական նահապետական կերպերը։ Այդ բոլոր պայմանների շնորհով է, որ հայ սոցիալիստ-ոսովակարականի համար սոցիալիստական հասարակական կազմակերպութեան իրագործումը հայութեան մէջ յայտնւում է հեռաւոր նպատակ, և նրա գործունէութեան ու ձգտումների առաջ ներկայանում է մէկ ուրիշ անմիջական պահանջ, իբրև մօտակայ նպատակ։ Ահա հէնց այդ մօտակայ նպատակն է, որ գործնականապէս զբաւած է հայ սոցիալիստ-ոսովակարականի, հայ յեղափոխականի առջև. Հնչակեան կուսակցութեան առջև։ Այդ մօտակայ նպատակը կայանում է հետեւեալում. — Յեղափոխել ու ոչնչացնել միապետական կարգերը, փրկել հայ ժողովրդին իր ընդհանուր ստրկական դրութիւնից, տալ նրան քաղաքական կարելիութիւն միջամտելու քաղաքական գործերում, վերացնել այն խոչնդոտները, որոնք արգելք են նրա տնտեսական զարգացման, առ հասարակ նրա կուլտուրական առաջընթացութեան, ըստեղծել քաղաքական պայմաններ, որոնք աշխատաւոր դասակարգին միջոց տան ազատ կերպով արտայայտելու իր ձգտումներն ու պահանջները, աւելի ու աւելի բարելաւելու աշխատանքի ծանր պայմանները, դասակարգային գիտակցութիւն ձեռք բերելու ու կազմակերպութիւն իբրև ինքնուրոյն քաղաքական մարմին՝ և դիւրացնելու նրա այն բոլոր հասարակական ջանքերը, որոնք պէտք է ամեն տրամադրելի հասարակական պայմանների միջոցով նպաստեն նրա առաջխաղացութեան դէպի հեռաւոր նպատակը։ Այդ բոլոր նկատակումների հիման վրայ — շարունակում է Մրագիրը — Հնչակեան կուսակցութեան մօտակայ նպատակն է՝ կրել միջ միապետական կարգերը սպառնալու համար և նրանց փոխարինելու հանրային ուսակարգական սանձակադասական կարգերով» *)

*) Տես Հնչ. Կ. - Թեան Մրագրի (նայն հրատ.) բաժին Բ.

Եւ այդ տեղ Մրազբում արձա- նագրած են այն մի շարք գրու- թիւները՝ քաղքական ու արն- տեսական, որոնք պէտք է կազ- մեն հիմունքները ռամկավար- կան սահմանադրութեան: Այդ- տեղ խօսքը լինելով անբարոյ հա- յութեան մասին, Մրազբի բն- մի բառով չէ յիշատակում ազ- գային անկախութիւնը, քանի որ գա բոլորովին օտար ու հակառակ է իսկ սօցիալ-ռամկավարական գործունէութեան: Ռամկավար- կան սահմանադրութիւնը հայու- թեանը կը տայ ազատութեան բու- լոր քաղաքական ու անտեսական անմիջական պայմանները, որոնց շրջանակում ազգային անկախու- թեան պահանջի տեղի էլ չըկայ և որոնք շատ աւելի ընդարձակ մի- ջոց ու երաշխաւորութիւն են հա- յութեան զարգացման և առաջա- գիմութեան, իբրև «քաղաքա- կիրթ մարդկութեան մի մասի» և իբրև մի որոշ ցեղական համա- խմբում:

Ահա դրանք են տասն և հինգ տարիից ի վեր Հնչակեան կուսակ- ցութեան սօցիալ-ռամկավարական սկզբունքները, հասարակական դաւանանքը, որ պարզապէս են ո՛չ միայն յօդուածներով, այլև ար- ձանագրած են նրա Մրազբում: Ի՛նչ է նրա հայեացքը հայկական իրականութեան վրայ, որպէս և նրա առաջադրած գործունէու- թիւնը, որ քանակապէս զուտ չի յիշուի՝ թէ՛ իր հիմունքներով եւ թէ՛ եղանակներով՝ առաջադրու է գիտական սօցիալիզմից, սօցիալ- դեմոկրատիայի աշխարհայեաց- քից: Այդպիսով տասն և հինգ տարի առաջ հայութեան գլխին պարզեցաւ գիտական սօցիալիզմի գրոշակը: Յայտնի է նոյնպէս, որ այդ սկզբունքները, այդ Մրա- գրի պաշտպանութեան համար ո՛րպիսի և ո՛րքան մոլի կռիւնե- ըրի, դաւերի, հալածանքների պէտք է գիմագրաւէին տարիների ըն- թացքում Հնչակեան կուսակցու-

թեան հիմնադիրները: Նրանց հե- տեորդները շարունակում են նոյն գիմագրութիւնը գեւ մինչև այ- սօր:

Իայց «Հնչակի» քարոզած այդ դասակարգային, սօցիալիստական գործունէութիւնն այն ժամանակ չը ստացաւ և չէր կարող ստանալ ծաւալ ու զօրութիւն: Նոյն Մրա- գրի բաժին Գ. պարունակում է նկատումներ (մեկնաբանած ըն- դարձակ յօդուածներով), որոնք որոշում են, թէ ո՛րպիսի պատ- մական ու քաղաքական այնպեա- ձգելի պայմաններ անհրաժեշտ դարձրին հայ յեղափոխական ոյ- ժերի գործադրութիւնը թիւր- քաց-Հայաստանում: Քաղաքական որպէս և ազգային դրութեան հան- դամանքները պահանջում էին այդ երկրում ժողովրդային ապստամ- բութիւն, որը միայն կարող էր ունենալ այդ տեղ գործնական հող- Իայց և այնպէս ա. դ. գործունէ- ութեան նշանակէտն էր դարձնել Հնչակեան Մրազբի մօտակայ նը- պասալը: Եւ յեղափոխական բու- լոր կենդանի ո, ժերն իրանց ջան- քերն առաջնապէս սկսան գործա- դրել այդ ապստամբութեան հա- մար և այդ ուղղութեամբ: Հիմ- նական նշանակութիւն ունի, սա- կայն, Մրազբի հետեւեալ կէտը, որի մէջ պարզ ապացոյց կայ, թէ գեւ տասն և հինգ տարի առաջ Հնչակեան հիմնադիրները որպիսի հիմնական մի գրութիւն ունէին իրանց աչքի տակ, քալ ըմբռ- նած լինելով հայկական իրական- նութեան պատմական զարգաց- ման ընթացքը: Մրազբի այդ կէտն է հետեւեալը. —

«Հայ յեղափոխական գործունէու- թիւնն ԱՅՍՕՐ բացառապէս (պէտք է) ներքէ թիւրքախոյ ժողովրդային դատի պաշտպանութեան ու լուծման համա- ձայն մօտակայ նպատակի:»

Թող չը վրիպէ ընթանցողի ու- շաղքութիւնից այն կարևոր ու բա-

*) Նօտր գիրը պատկանում է Մրա- գրին:

ցադրական ցուցմունք որոշայնօր- և «թիւրքախոյ» բառերը (որ- պէս և «մօտակայ նպատակ») ստու- րապէս են նոյն իսկ Մրազբում: Իս ուղղակի կը բացով մատնանիչ է անում այն պատմական անհրա- ժեշտութեան վրայ, որ ՎԱՂԻԵ- ղափոխական գործունէութիւնը պէտք էր լինի ընդարձակ, ան- ցնել սահմանի վրայից և հասց- նել մինչև կողմասեան լեռները և ուրեմն ո՛չ միայն «Բացառա- պէս» թիւրքախոյ, այլ և Ռուսա- նայ հողի վրայ: Եւ վերջին տա- րիներն այդ Վաղաւն արշալոյսն արդէն ծագել է, և նա ծագել է նաև Հնորհով Ռուսաստանում սօ- ցիալական տարրերի շարժման մի կողմից, որ ան, ետաձգել է դար- ձնում հայ սօցիալիստների հա- մագործակցութիւնը նրանց հետ և միւս կողմից շնորհով այն քա- ղաքական հանգամանքի, որ թիւր- քախոյ դատի լուծումն այլևս կար- լած է գրեթէ բացառապէս ու- սական միապետութիւնից:

Հնչակեան Մրազբին իր հիմ- նական դրութիւններով ընդար- ձակ ապարիզ է տալիս հայ սօ- ցիալ-ռամկավարականների գոր- ծունէութեան ախրոյց հայութեան դաշտում, պարզելով սօցիալիզմի գրոշակը և ձգտելով հասնել նախ այն անմիջական դրութեան, որ կարող է նոյն Մրազբի մօտա- կայ նպատակը:

Աչքի առաջ ունենալով այդ- պիսի նոր գործունէութեան ծանր հանգամանքները, որպէս և խն- դիրները կենսական մեծ նշանա- կութիւնը, աւելի քան ցանկալի է, որ հայ սօցիալիստներն իրանց բանակիւններին չըտան սուր կեր- պարանք, առաջ չը բերեն անձ- նական ներքին հակումներ և ան- տեղի հեղափոխութեան «Եստի- Գառն» փորձառութիւնները թո՛ղ դաս լինեն նրանց, որոնք ան- կեղծօրէն ձգտում են առաջ բե- ընել նոր գործունէութիւն, որի սահմանները լայնածաւալ են և

որի արդիւնքը կարող է լինել բեղմնաւոր: Առաջնորդելով մի և նոյն իդէալներով, թո՛ղ նրանք սկզբից իսկ ձգտեն միմիանց հաս- կանալ, մոռանալ հայի բնածին հակառակութեան ոգին, առանձ- նակի գեր խաղալու և այժտիսէ՛՛՛ ձեւանալու հակասօցիալիստական բնազդը, երկնքից մանանայ լ- ջեցնելու հնարագիտութեան ձե- ւերը: Թո՛ղ լինեն պարզ, անկեղծ ու լրջամիտ, և եթէ դրա շնոր- հով աշողեցան անցնել անհամա- ձայնութեան Ռուսիկոնը, այն մա- մանակ կը ստեղծէ հայ սօցիա- լիստական մէկ և ընդհանուր հզօր կուսակցութիւն:

Մ Ի Հ Չ Օ Ր Չ Ա Յ Ն
(շարունակութիւն)

Գրիտունէութիւնը Հայերի հա- մար մի նոր կրթական տարր և զաւ և յատկապէս ազգային: Ելլը որ Հայաստանն իւր քաղաքական անկախութիւնը կ'որցրեց, եկե- ղեցին ազգային աւանդութիւն- ների նշանաբանը և պահպանն եղաւ, մօտաորակէս ինչպէս որ յետոյ լեհաստանում:

Գրականութիւնը մասամբ պատ- մական կերպարանք ստացաւ, մա- սամբ խիստ եկեղեցական. բազկա- ցած էր կրօնական գոյն ունեցող ժամանակագրութիւնից և միտու- քական բանաստեղծութիւններից, սակայն պահպանեց թախծալի և ինքնօրինակ պօզիւրա-բանաստեղ- ծութիւն, հրաշալի շարական- ներ — օրհնեցութիւններ, Մով- սէս Խորենացու բանաստեղծական ոգեշունչ պատմութիւնը, որ ուսել էր Յունաստանում և ծանօթ էր իլիականին:

Նա գովաբանում է դիւցազ- ների քաջութիւնը, և սիրում է իւր երկիրը: Նա փառաբանել է Վանի կողմերի հրաշալի գեղեց- կութիւնը, որ Շամիրամ թագու-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն
Ա Ն Ի Թ Ի Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը
Պ Թ Ե Ն Յ Թ Ի
Քարգիւսակեց Ըրանստեղնէ
Ա. Տ-եան

Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Ե Ի Ս Ի Է Ն Բ Ե Ր Ը

Սօցիալիստական կազմակերպութիւ- նը, ժողովրդային Պետութիւնը հեռի ազատութեան արգելք մը ըլլալէ, կը ներկայացնէ այն կազմը (organisme) որ կուտայ հնարաւոր ազատութիւն, ոչ թէ մի քանիներու այլ ամենուն հա- մար:

Իայց անիշխանականները Պետու- թիւն չեն ուզեր. «Մեր միակ նպա- տակն է Պետութեան ջնջումը եւ ըն- կերութեան բնական օրէնքներու ա- նարգել զարգացումը» (մալատէստա): Ասոնք այն օրէնքներն են, որ Նաչ- միտ գործարանատէրը մէջ կը բերէր,

եբը թողուց իր գործաւորները ան- գործ ու լքուած վիճակի մէջ, մատ- նուած «ընկերութեան բնական օրէնք- ներու ազատ խաղին»:

«Ոչ մէկ կանոնադրութիւն չկրնար սահմանադրել մեր վայելքները (terre et liberte—Երկրագոյնտ եւ Ազատու- թիւն), ահա՛ ինչու համար անիշխա- նականները չեն յարգիր ո՛չ օրէնք, ո՛չ բարոյական: Անոնք կը յուսան որ իւրաքանչիւր անհատ լաւ կերպով պի- տի գործածէ ամեն ինչ ընելու եւ ա- մեն ինչ թողուլ ընելու բացարձակ ազատութիւնը: Իբր թէ նոյն իսկ ամենազանա մարդոց համար ազա- տութիւնը պէտք չըլլար սահմա- նաւորել, որպէսզի իւրաքանչիւրը վայելէր հաւասար ազատութիւն մը, իբր թէ անհատի անկախութիւնը պէտք չէր դադարէր հոն, ուր կակսի այդ ընկերական անհրաժեշտութիւնը: Բաւական է որ մարդ աչքերը բանայ, տեսնելու համար որ մարդկային ազա- տութիւնը սերտ կերպով կ'ապուած է պատճառներու եւ հետեւանքներու եր- կար շարքի մը՝ որու արդիւնքն է

միայն ներկայ ընկերութիւնը:

Արդարեւ անհատը ունի այնպիսի նուիրական իրաւունքներ, որոնց իշ- խանութիւնը երբէք չի կրնար ձեռք տալ: Մանաւանդ ստրկական դատարա- րակութեան եւ բարոյական վնասու- թիւններու այս դարուն մէջ է, որ անհրաժեշտ է զարգացնել անձնաու- ընութիւնը եւ զօրեղացնել բարոյա- կան գիտակցութիւնը: Իայց միայն ընկերակցութեամբ է որ անհատը կա- ըող է ձեռք բերել այդ ոյժը, դիմաց- կուն շէնքերը կը շինուին կուսիտով:

Ճշմարիտ ազատութիւնը ինքնին կը պահանջէ անհատի կատարելազար- քացումը, որքան նիւթական, նոյն շատ ալ բարոյական եւ հասարակական տեսակէտով, ան է որ պիտի զարգաց- նէ անոր արդարութեան զգացումը, պիտի արթնցնէ անոր մէջ գեղեցիկն օճերը, պիտի բարձրացնէ ու պիտի մա- քրէ անոր սիրտը եւ դատողութիւնը, եւ տակաւ աս տակաւ անիկա պիտի զգայ որ իրաւունքը, արուեստը, սէշ- ըր եւ գիտութիւնը կը ծնանին հա-ւաքական կազմէ:

Մենք կուզենք դնել ամենքը կիսն- քի ազատ ճանապարհի վրայ, հասա- սար պայմաններու մէջ, որպէսզի իւ- րաքանչիւրն առնէ հաւասար բաժին մը բեռն, թեթեւեղեղ համար մարդ- կութեան ու խտազանացութիւնը դէպի աւելի բարձր վիճակ մը: Ջուրին մէջ խեղդուողը ազատելու համար է որ գործիքներ կը նետեն եւ ոչ թէ զան ընկզմելու:

Մարդկութեան շահը կը պահանջէ որ «ամեն մարդ օգտուի իր բոլոր ի- րաւունքներէն՝ զարգացնել իր ոյժերը, լիովին վայելէ կեանքն ու ազատու- թիւնը, ենթարկուած չըլլայ ոեւէ կա- պի, իշխանութեան, ազատ ըլլայ ա- մեն ծանրաբեռնումէ և պարտականու- թիւնէ, որոնց ոչնչացումը հնարաւոր և արդար է: (Հէլէն Մէրսիէ, Օրօրա լէԿ)»:

(շարունակելի)

Հին իւր համար ամառանոց ընտ-
րեց: ՄԵՆՔ ասում է սա, մի
երկրում, ուրտեղ կլիման այսպէս
մեղմ և օդն այսպէս յստակ է,
պէտք է մի քաղաք և մի ար-
քայական ամրոց կառուցանենք,
որպէսզի այս տեսակ վայելքների
մէջ ապրենք:

Հին ժամանակի մի ուրիշ նը-
շանաւոր պատմաբան՝ Եղիշէ, որ
նկարագրել է Հայոց պատերազմն
ընդդէմ Պարսից՝ փառաբանում
է մի նշանաւոր հատուածի մէջ
Հայ տիկիներին, որոնք ամեն
ամանակ հազուադէպ արիւթիւն
ընց տուին. ամենակերպ մի քա-
նի տարի առաջ Սասունում, երբ
խառն մատաղահասականայրիքին
իրենց ժայռից ձորը նետեցին,
որպէսզի տաճիկներին ձեռքը չըն-
կեն, կամ Բալու, որտեղ երե-
տուն կանայք, նայն պատճառով
տաղեր երգելով, Եփրատ գետը
նետուցանւ. Եղիշէն նկարագրել
է այրի կանանց լըլուծիւնը և
զրկանքները պատերազմի ժամա-
նակ:

Արիստակէս Լաստիվերտցու
ժամանակագրութիւնը, որը Թա-
թարների և Պարսիկների յարձա-
ումներն է պատմում, նկարագր-
ում է Հայաստանը գէո 900 տա-
րի առաջ ոմերկ, ճանապարհի եզրն
ընկած, բոլոր ժողովրդների կող-
մից ոտնատակ արուած, տունե-
րից դուրս քշուած, կալանաւոր
և գերի:

Ժն. դարից մինչև ժն. դարը
Հայ ժողովրդական ոգին կատա-
րելուպէս ճնշուած էր, ոչնչացած:
Միմայն եկեղեցին էր մնացել
անն ուն. Վանքերում քնած էին
հին ձեռագիրները:

Մի վարդապետ, Մխիթար ա-
նունով, որ հասկանում էր, թէ
ճակատանում չի կարելի Հա-
յութեան համար մի հոգեւոր վա-
ռարան հիմնել, տանում է Թան-
կագին ձեռագիրները Վենետիկ,
որ տեղ նա հիմնում է Ս. Ղազա-
րի վանքը, որ իբրև միտեսակ
հայկական համալսարան հանդի-
սացաւ, որի մէջ Լորդ Բայրընը
սկսեց Հայոց լեզուն սովորել: Այս
վանքի բնակիչները հազարից գոր-
ծաւնէութիւն են ցոյց տալիս իբրև
թարգմանիչներ, և ծանօթացնում
են այսպիսով իրենց հայրենա-
կիցներին հին և նոր Եւրոպայի
բանաբան հետ, Հոմերոսից մինչև
Ռասին և Ալֆրէտիից մինչև Շել-
լեր:

Սկսում են արդի Հայերենը—
այլարհաբարը գրաբարի — հնի
տեղ գործածել Գրականութեան
մէջ, և արդիւնքը եղաւ 19-րդ
դարու հայկական կեանքի ծաղ-
կումն ու բարգաւաճումը: Երի-
տասարդ մարդիկ, որոնք Եւրո-
պայից տուն են դառնում, հեա-
ները տանում են Եւրոպական ու-
նակախոս արտագրութիւնները և
Պոլսում հիմնում ազգային
թատրոն:

Բանաստեղծներ, որպէս Գար-
րիէլ Սունդուկեանց և յետոյ Աւե-

տիս Նաղարէկ, իրենց թատ-
րերգութիւններն մէջ ծաղրով ու
կրքով յարձակուել են իրենց հայ-
րենակիցներին նախապաշարունե-
րի և քաղքենի կեանքի վրայ:

1848 թ. ոգին տարածեց Հա-
յաստանի լեռների վրա:

Հայկական ժողովրդական ո-
գին շարունակ Եւրոպականացաւ:
Ռուսական հողի վրայ, ռուսական
վէպի և Կերմանացոց սօցիալ-տըն-
տեսական երկերի աչքեցութեամբ
ծագեց մի երկրորդ Հայկակ. գրա-
կանութիւն, որը ժողովրդին ճաճ-
կական բունութեան դէմ ոտքի
կանգնելու էր գրողում: Նալ-
բանդեանը տունց Հայ ժողովրդին
նրա ազատութեան երգը:

Տաղանդաւոր Ռաֆիկին գրեց
իւր շատ լեզուներով թարգման-
ւած՝ Ձալալ-էրդին վէպը, որ
նկարագրում է Հայաստանի կա-
ցութիւնը 1877 թուականին և
ժողովրդի մարտիրոսութեան աչ-
դու պատկերն է տալիս թէ այն
ժամանակ և թէ ներկայումս: Ինչ
որ մենք քիչ առաջ զարհուրան-
քով տեսանք, յարձակումներն ու
բռնաբարութիւնները, բոլոր հեծ-
կլտանքներն, ցից բարձրածները,
հրաշեկեղակով մարտիրոսացած
ները՝ այն ժամանակ գոյութիւն
ունէին:

Այս վէպը այնտեսակ տպաւո-
րութիւն է գործում, ինչպէս այն
նամակները, որոնք գրուած են
1894—96 թուականների թշուա-
րութիւնների մասին:

Երկար հոգեւոր թմրութեան
միջոցին ժողովրդական երգը մը-
նաց միշտ թարմ նա նոր սաղ-
մեր գրեց և ո՛չ մի ուրիշ ժողո-
վուրդ ժողովրդա՛ն ժամանակա-
կից երգեր չունի, ինչպէս Հայ
ժողովուրդը, փախստականի հնչուն
երգերը, սիրահարուած աղջկայ
կրքոտ երգերը:

Մի երիտասարդութիւն առաջ
եկաւ, որ միևնոյն ժամանակ ճա-
նաչում էր Հին-Հայաստանը և՛
արդի մտքերով տոգորուած՝ կա-
ռավարութեան անարդարութեան
և քեւրդերի դաժանութիւնների
դէմ բողոք բարձրացրեց:

(Վերջը՝ յաջորդ թիւին)

ՆԱՄԱԿ ԻՄ ԲԱՆԿՐՈՒԹԵԱՆ

Յայտնի է, որ դանիացի հան-
ճարեղ գրա՛նահագէտ-քննադատ Գ.
Բրանդէսը ներկայ տարւայ փետ.
ամսին Բերլինում արեց մի հրա-
պարակային գեղեցիկ, սրտաշարժ
ու հմտալի դասախօսութիւն, որի
նիւթն էր ո՛չ Հայերն ու Եւրոպա՞ն:
Աշխարհահռչակ քննադատի հան-
ճարը հանրագիտական է, և նրա
գրական գործունէութեան հետե-
ւողները քաջ գիտենթէ որպիսի

*) Սոյն նամակի մէկ այլ օրինակ
ուղարկւած է «Մշակի» խմբագրու-
թեան.

**) Կարդացէք «Վերանորոթեան»
թիւերում պ. Ս. Տաշիրի «մի հօր
ձայն» վերնագրով յօդւածը. Դ. Յ.

սէր է նա տածել միշտ դէպի
ճնշուած ազգերը, դէպի ազատու-
թիւնը և առաջադիմութիւնը, դէ-
պի բարձր գաղափարները, որոնք
եղել են միշտ նրա մտքի, սրտի
ու կեանքի ուղեցոյցները: Տա-
կաւին եօթ-ութ տարի առաջ նա
բարձրացրեց իր հօր ձայնը —
Եւրոպայում ամենաառաջիններից
մէկը—յօգուտ բազմաշարժար հա-
յութեան: Այնուհետև ամեն առի-
թին նա դրել է հայութեան մա-
սին, պաշտպանել է նրա ազա-
տագրութեան գործը և պէտք ե-
ղած պարագային յայտնել, որ
հայերը միայն գործով կը փրկեն
իրանց դառն գրութիւնից: Բեր-
լինում արտասանած նրա ճառը
մեծ յուզմունք առաջացրեց պաշ-
պանողական մամուլում, և այդ տե-
սակէտից Բրանդէսն էլ ունեցաւ
իր բաժինն այն քարերից, որ
այդ մամուլը ամեն պարագային
չպարտւած է հայութեան գլխին:
Բայց Բրանդէսը Գաղափարի ծա-
ռայ է և նա փորձով դիտէ, որ
հասարակական աշխարհի մի գոր-
ծիչ, ամեն երկրում, միշտ իր
գլխի վրայ է կուտակում լուսի-
նայի, հնամուտութեան ու պաշ-
պանողականութեան, որպէս և ա-
պիկարների ու նախանձոտների
չանթերը: Գաղափարի համար
յանդուգն մարտնչող իր ամբողջ
հեանքում՝ Բրանդէսը ենթակայ
է եղած ամենածանր ու տղեղ
հալածանքների, նոյն իսկ իր հա-
րազատ ազգի կողմից, որի տկա-
րամիտ կամ ջեզիտական ու սոտ-
րաբնազդ մասը դաւ էր նիւ-
թում մինչև իսկ նրա կեանքի
դէմ դեռ սրանից քսան տարի
առաջ (Բրանդէսը հիմա 61 տա-
րեկան է): Այժմ ամօթի կամ մն-
ուացութեան պատանով է ծածկ-
ւած հասարակութեան այդ դա-
ւադիր մասը: Բրանդէսն ունի ե-
րեք պաշտամունք. Գեղեցիկը,
Ազատութիւնը և Գաղափարը, ո-
րոնց նա ծառայել է միշտ և ո-
րոնցով զօրաւոր՝ նա արհամար-
հանքով է պատասխանել իր դէմ
կատաղաբար յարձակողներին, և
այսօր ինքն մէկ անմահ անուն է
կտակում աշխարհին, մինչդեռ
միւսները...

Մենք, հայերս, պէտք է ե-
րախտապարտ լինենք նրան, որ
իր մեծ հեղինակաւոր ձայնը մի-
ախառնում է այսօր մեր ազա-
դակների հետ և պահանջում ար-
դարութիւն: Սակայն հայերս սի-
րում եքն դասեր տալ ո՛չ միայն
իրարու, այլ և... հանճարներին:

«Մշակի» սոյն տարւայ № 77-ի
էջերում զետեղուած կայ մի մա-
տենագրական յօդւած: Դրանիւ-
թըն է Բրանդէսի վերոյիշեալ դա-
սախօսութիւնը: Վերջին ժամա-
նակներս միայն մէկը նրան հա-
ղորդում է այդ յօդւածի մասին:
Ընդհանրապէս համակրական՝ յօ-
դւածի վերջերում մի քանի դա-
սեր են տրուում աշխարհահռչակ
քննադատին: Երկար տարիներից
իվեր բախտ ունենալով վաւելել

Բրանդէսի բարեկամութիւնը, նա
խօսել է ինձ հետ այդ յօդւածի
մասին, գլխաւորաբար նրա վեր-
ջին մի քանի կէտերի մասին, որ-
պէս և նոյն կէտերի նկատմամբ
հաղորդեց ինձ մի քանի մասնաւոր
տեղեկութիւններ: Այդ կէտերը
(բայի մէկից, որի մասին կը
խօսեմ աւելի ներքև), այդ կե-
տերն, ասում եմ, արդարև կարող
էին նրա ո՛չ միայն զարմանալի,
այլ և տարօրինակ թւալ: Եւ հա-
իրա, Բրանդէսի, խնդիրքով ու
յանձնարարութեամբ, հարկ եմ
համարում հաղորդել Հայ հասա-
րակութեանը նոյն իրա Բրանդէ-
սի հետեւալ բացատրութիւնը:—

«Մշակի» յօդւածում կան յե-
տագայ տղերք:— Գ. Բրանդէսի
ճառը զժբաղդաբար պարունակում
է իր մէջ և մի քանի սխալներ,
որ ծագում են հաւանօրէն այն
հանգամանքից, որ յարգելի հե-
ղինակը հնարաւորութիւն չէ ու-
նեցել կարճ ժամանակամիջոցում
հայկական իրականութեան հետ
լրիւ կերպով ծանօթանալու և երկ-
րորդ՝ որ իր ձեռքի տակ չէ ունեցել
նպատակաշարմար և անմիջական
աղբիւրներ: Հէնց այդ հանգա-
մանքին պէտք է վերագրել այն
քանը, որ նրա ճառի մէջ մեր
տաղանդաւոր գրամատուրգ Գ.
Սունդուկեանցը շեշտված է իբրև
Հայ նշանաւոր բանաստեղծ (?),
Աւետիս Նաղարէկը իբրև նշա-
նաւոր թատերագիր (?) և վեր-
ջապէս Չորանեանը իբրև Հայ ազգի
ամենալաւ (?) որդիներից մէկը:
Որքան ուրախալի կը լինէր, եթէ
վերոյիշեալ ճառը առիթ հանդի-
սանար դանիացի աշխարհահռչակ
գիտնականի համար իր գրական
գործունէութեան մի շնչին մասն
էլ նւիրելու: Հայոց գրականութեան
պատմութեան ուսումնասիրութեա-
նըս և այլն...»

Դրանք են «Մշակի» խօսքերը:
Բրանդէսը պատասխանում է. —
Որ Եւրոպական մի գրող կարող է
ծանօթ չըլինել մի փոքրիկ ազգի
և անծանօթ լեզուի գրականու-
թեան, դրանում ոչինչ տարօրի-
նակ չի կայ և դրա հակառակն
է, որ պէտք է զարմանալի հա-
մարել: Նա կարող է ոսխալներս
սկենալ այն անձաւորութիւննե-
րի մասին, որոնց գործունէու-
թեան ուղղակի կերպով անծանօթ է
և Չորանեանն այդպիսիններից մէկը
լինելով, Բրանդէսը խոստովա-
նում է, որ այդ պարտին մասին
իր ասածը մի բացարձակ քիտի-
մացութիւն է, որին ինքն զոհ է
եղել: Բայց նա կարծում է, որ,
«Մշակի» յօդւածագիրն է ուղ-
խալներս անող Գ. Սունդուկեան-
ցի և Աւետիս Նաղարէկի նկատ-
մամբ: Բրանդէսը ցաւում է, որ
յօդւածագրի համար «բանաստեղծ»
բառը միայն այն նշանակութիւնն
ունի, ինչ որ հասկացում է հա-
սարակ կերպով, այն է սաղախ-
չնակաւ բանաստեղծութիւն: Բա-
նաստեղծ խօսքը շատ աւելի լայն
և շատ աւելի խոր իմաստ ունի,

րական կողմը՝ լի ցանցաձև ու աշխարհաւեր ծրագիրներով — որոնց համար հարկաւոր էին իրամարկեան փափկանկատ կարիներտներ, — ուղղուած էր բացառապէս դէպի աշխարհաւեր անմիջապէս քաղաքական-տնտեսական շահեր էին շոյափուում, ուր պետութիւնը ապագայ մեծ էնտերեսներ ունենալու ցաւով բռնուած էր:

Ահա այս էր Եւրոպական մեծ պետութիւնների այսպէս ասած՝ կարելի/չկարել, որ իր հարազատ բնաւորութիւնը պահպանեց ամբողջ 25 տարուայ ընթացքում: Եւ ամբողջ մի քառորդ դար, քաղաքական վերածնութեան, սուրբ անկախութեան ձգտող հայ տարրը, մի կողմից յեղափոխական փրկարար կոչը չբռնին, իսկ միւս կողմից 61-րդ յօդուածը՝ այդ մեռած գրաւականը, իւր գոտում կշիռած, շարունակ ենթակայ էր ցինիկ Եւրոպայի երկդիւի, խաղաղ գիւղամատիայի սարքած խաղերին, նրա խաբուսիկ խոտումներին:

Ինչպիսի՞ վառ յոյսեր, քաղցր ակնկալութիւններ է կապել ժամանակակից հայ սերունդը ծրագրող բեֆորմների իրագործման հետ: Նա, թերեւս, չկարողանար քաղաքագիտական նրբազգացութեամբ կանխատեսել ապագան՝ այսօրուայ օրը, երբ ներկայ սերունդս խորին հիասթափութեամբ շարունակում ենք սուս մնալ քաղաքական գարու բոլոր հանելուկային խաղերին, նենգ ու յայտն գործողութիւններին, իբրև անմիջական վիժուածք իրապետական — բուրժուազիական բեֆորմի:

Ահ ու սարսափը պատեց Հայոց Աշխարհ, Հայ Երիտասարդութեան լաւագոյն մասը հասկացաւ դարուողին, նրա մէջ վառուեց աչքաւ սիրական եռանդը և նա հրոսակա ին խմբերով համիրականների դէմ դուրս գալու արիւթիւն ունեցաւ: Հայ յեղափոխական կազմը գիտակցեց իւր սրբազան ձգտումների նշանաբանը դարձնել — «Սուրբ Ազատութիւնը ձեռք է բերում արիւնով և սեփական ջանքերով» — պատմական ճշմարտութիւնը: Սակայն ի զուր: Յինիկ Եւրոպան չամաչեց՝ հայի խոցուած հոգու յաճախ կրկնող դառը մրմունջներին — «Երկիրը տարի մեր երակներէն, կաթկաթ ծորեցաւ մեր վերջին արիւն» — շարունակ պատասխանել՝ «... Երու գանք հայերէն, հայի մէջ չկայ ուժ ու քաջութիւն»:

Վրայ՛հասաւ աշխարհաւեր նախճիրը, զարհուրելի կոտորածը: Հայի անգաստանը ողորեց արեան գետերով, գետին տապալուեցին 300,000 անմեղ ու անպաշտպան զոհեր, որպէս սպանդանոց ժողոված ոչխարի հոտ: Մաքրուեց, կորցրեց հայ իրկիրը իւր լաւագոյն ոյժերին: Հայկայ Բուրաստան աշխարհը դարձաւ անսպասու: Եւ այդ ժամանակ ան-

գամ անգութ Եւրոպան՝ փոխանակ բռնադատելու «Արիւնուղոց հրէշիւն» իւր վրայ ծանրացող պարտքը կատարելու, — սր խոզխոզ հայի վերջին հեծկլտանքին՝ «Ձեռքերս կապած, ոտքերս շրջութայ...» — սառնարհամարհամբով պատասխանեց՝ «էէ՛ր չեւրք ոտքի, ձեռք ազատութիւն, ձեռք օրէնք չկայ, տարեք կրեցէք դուք կեանք ստրկի»:

Այսպէս էր խոսում «մարդասէր» Եւրոպան մի քաղաքական հարցի հետ, որ մի անգամ ընդմիջտ միջազգային գիւնադեւտութեան աւազանում կնքուել հրահանգման նիւթ էր դարձել:

(Վերջը՝ յաջորդ թիւին)
Լայպցիգ B. I. Bolt

ԱՐԵԻՄՏԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ Ե.

Շատ հետաքրքիր ամիսներ են վերջին Յունիս, Յունիս ամիսները: ամեն անգ ճգնաժամ, այն էլ ոչ թէ հասարակ, դրամական, գրպանի՝ այլ միջխտրական, քաղաքական ճգնաժամ: Աւստրիայում ճգնաժամ, Ռեպարիայում, Իտալիայում, Յունաստանում, Սպանիայում... Սրանք, կարծէք, բաւական չէին, չգիտենք ի՞նչ մտածեց Հուոի Պապը, Լեոն ԹԳ. ն էլ այս քառու ժամանակը ճգնաժամի միջոց գտաւ... Սոսկալի գրութեան մէջ նորին Սրբութիւնը անցուց իւր ճգնաժամն սուգով պատելով, աւաղ, որբացեալ ամբողջ կաթոլիկ աշխարհը... Սակայն այս շատ կարեւոր ճգնաժամի մասին յետոյ կը խօսենք: այժմ մի քանի խօսք ստենք Ռեպարիայի, Աւստրիական միջխտրական ճգնաժամի մասին:

Պէտք է նկատել, որ միմիայն ֆրանսիական պատղամաւորների ժողովը չէ, որ կատաղի, մոլեգին տեսարանների և սխալադիմելի ասպարէզ է դառնում: Եթէ այստեղ, գլխաւորապէս, տարբեր կուսակցութիւններ և սկզբունքներ դաւանողներ կան՝ նոյն ազգութեան պատկանող, Աւստրիական ռալիստազոն, ընդհակառակը, տարբեր ազգութիւնների, ժողովուրդների ու ցեղերի շահերն ու իրաւունքներն են, որ ոչ միայն սկանդալների, բուռն տեսարանների ասպարէզ են դարձրել շատ յաճախ, այլև քիթուպուռն շարքու փշուր անել տրւել, անբըակայելի տուրուզումփոցների դուռ բաց արել: Յայտնի է որ այստեսակ տուրուզումփոցների դուռ բաց եղաւ, երբ, տարիներ առաջ համագերմանականութեան շեք մի բահարները, աւստրիական ռալիստազի enfant terrible-ները, Վոլֆ և Շիններբր պատղամաւորները ամեն տեսակ օյիններ և սկանդալներ էին սարքում, համագերմանականութեան գաղափարը բուռն կերպով տարածելու Աւստրո-Ռեպարիական կայսրութեան մէջ, Գարմանական

լեզուի և Գերմանական ժողովուրդին աւեր կերպ առանձնական առանձնաշնորհումներ և առաւելութիւններ տալու հայլն հայլն: Պարզէ, որ Ձեռքերը ամեն կերպ պաշտպան կանգնեցին իրենց ազգային իրաւունքներին և՛ վերջի վերջոյ, ահագին սկանդալներից ու պառլամենտական աղմուկներից յետոյ՝ որոշ զիջումների ու շնորհումների արժանացան: Ազմուկները, խռովութիւնները գաղարիցան կէօրբէր աւստրիական միջխտր-նախագահի օրով: Երեք տարուց աւելի հանգստացաւ երկիրը, սակայն այս հանգստութիւնը փոթորկից առաջ տեղի ունեցող խաղաղութեան էր նման:

Վերջերս թէ Ռեպարիայում և թէ Աւստրիայում միջխտրական ճգնաժամեր բողան, որոնք արտասովոր երկար տևողութիւն ունեցան: Կէօրբէրը, Աւստրիական բարի և խաղաղասէր Պրանց Եօսէֆ առաջին արիստոկրատ կայսեր ցանկութեամբ — թէ ներքի կը լինի այս մակդիրները գործածել մի միապետի համար — կըրկին մնաց իւր պաշտօնում երկարատե տատանումներից յետոյ: Ամենից հետաքրքիրը Ռեպարիական միջխտրական ճգնաժամէ: Ձիւնուրական միջխտրը զիտուրական մի նոր օրինակի առաջարկեց պատղամաւորական ժողովին: Ահագին աղմուկ և ժխոր բարձրացաւ և Կոչուտի-հոչակաւոր հայրենասէր Կոչուտի որդին — կուսակցութեան բուռն և կատաղի ընդդիմութեան առաջ տեղի տուեց հրաժարուել, Յէլի միջխտրութիւնը և ասպարէզ եկաւ կոմս Կրէն խոտանալով ձեռք վերցնել զինուորական օրինադից: Իրամարկի, միջխտրի ահաւելի երկանաքարերով ամբողջ Եւրոպան ճնշող երկաթէ կանցքերի դափնիները, հանգիստ չեն տալիս անշուշտ նաև Ռեպարիական զինուորական միջխտրին: Բայց և այնպէս Կրէնի խոտումը նշանակութիւն չէ ունենում: Կոչուտի կամ «անկախների» կուսակցութիւնը որոշել է ինչ գնով էլ լինի, շարունակել ընդդիմութիւն նաև նոր միջխտրութեան դէմ, մինչև որ «Ռեպարիան» իւր անկախութեամբը և զօրքը ունենայ... այն ինչ որ վաղուց հետէ երգել են հոչակաւոր երգիչներ ու հայրենասէրներ, հայրենիքի ազատութեան վսեմ գաղափարով տողորւած Պէտէսֆներ...:

Կոչուտը ազնիւ խօսք տուեց Կրէնին, հրաժարուել ընդդիմադրութիւն կազմելու մտքից և թողել իւր կուսակցութեան մէջ ունեցած բոլոր պաշտօնները, թէ չզինուորական օրինադիցը յետ առնուի: Սակայն դրութիւնը ծանրէ, որովհետև ամիսներ է ահա՛ գործերը մնում են երեսի վրայ, երկիրը մնացել է առանց կանոնաւոր ղեկավարութեան... Նոր միջխտր-նախագահը ոչինչ չէ կարողանում կատարել անզուսպ Մա-

ճառների սուր ընդդիմադրութեան առաջ: Մի էլք կայ միայն, բայց մի չափաչանց երկաւոր էլք՝ լուծել պատղամաւորների ժողովը և նոր ընտրութիւններ նշանակել: Սակայն այս միջոցը դէմ է սահմանադրութեան, որի իրագործումն ահագին խռովութիւնների և նոյնիսկ յեղափոխութեան գուրը կը բանայ... Արդէն կարծէք յեղափոխութեան հողմեր են փըչում: Յեղափոխութեան հողմերը միշտ անպակաս կը մնան Ռեպարիայի վրայից, քանի որ կը ճնշուին Աւստրիական առանձնաշնորհումների հանդէպ, կամ՝ քանի որ «չեն ունենալ իրենց անկախ զօրքը, ինչպէս իրենք են աղաղակում, ոչեուր Աւստրիայից» նշանաբանն ունենալով... Նոր միջխտր-նախագահը, յուսահատութիւնից՝ արդէն որոշել է ծայրայիղ միջոցների դիմել: Թէ որքան կը յաջողուի, այդ ցոյց կը տայ մօտալուտ ապագան, բայց նա արդէն հասկացնել տուեց՝ կամ յեղափոխութիւն կամ արտոյլսփիզ: Այս մտքերը որոճալով՝ կայսեր մօտ է շտապում, կամ հըրաժարուելու, կամ անզուսպ պատղամաւորական ժողովը լուծելու իրաւունք ստանալու համար:

Եւ այսպէս, Աւստրո-Ռեպարական կայսրութեան այս տեսակ խառնակութիւնները, տագնապներն ու սկանդալները կը շարունակուին յաւէտ բուռն և կատաղի կերպով, քանի որ գոյութիւն կուսենայ նոյն կայսրութեան, նոյն հպատակների մէջ որոշ չափով անհաւասարութիւն, իրաւունքների և առանձնաշնորհումների այլաշանութիւն, քանի որ Ռեպարական ժողովրդի ռազգային արժանապատուութիւնը՝ թունդ կը վիրաւորեն՝ Աւստրիական սպաներով ղեկավարուելու մտադրութեամբ...:

Ազգային, էղէպական զօրացմունքներն ու մտքերն են ղեկավարում Մաճառ ոչհայրենասէրներին՝ սեպտակական զօրք ունենալու, անկախ թագաւորութեան փառքին արժանանալու, թէ իրաւունքների բռնաբարումն, տնտեսական ու նիւթական ճնշումները աղաւթին զգացմունքները ու անկապտելի սեպտակականութիւնների ոտնատակ տալը:

Անկախների խումբն, առանց աջ ու ձախ նախու, շարունակում է կառավարութեան առաջ խորին խոչընդոտներ սարքելը, մինչդեռ իրենց ամենասականաւոր պարագլուխը, Կոչուտը, այդ բանը մեծ գեղախտութիւն և շարիք համարելով իւր սիրած իսկ հայրենիքի համար, վար է դրել զէնքերը ու զրահը... Աւստրո-Ռեպարիան պատմական երկուութեան dualisme-ի է նման, որ մըցում են իրար հետ շարունակ, ոչարիւն ոչարուոյ գաղափարները մըցում են, կուռում և երկիրը խռովում, չփոթում...:

Ս. Տաշիր

Ն Ս Մ Ա Կ Ս Օ Ֆ Ի Ա Յ Է Ն

(Մեր մասնատու աշխատակցին)

Մի քանի օրէ ի վեր թրքական սահմանագլխէն ստացուած մասնատու նամակներէ կը տեղեկանանք թէ կողոպուտը և սպաննութիւնները կը շարունակուին տակաւին պաշտօնագրութեան և թիւրք զինուորներու կողմէ:

Վիէննական թերթերը այնքան ալ լատենտութեամբ չեն ուզեր վերաբերել Պուլկարիոյ և թիւրքերոյ ներկայ հաշտ կացութեան վրայ:

Թիւրք կառավարութիւնը վերջերս 16 պաթալիօն իջարի զօրքերն արձակած ըլլալուն պատճառով ուժերը առերևոյթ կը նուազին, սակայն պատերազմական նախարարութիւնը միեւնոյն ատեն որոշած է 10 պաթալիօն ֆոքր-Ասիական պահեստէն խրկել Մակեդօնիա, ապէս որ զօրքերու քանակութեան վրայ 6 պաթալիօնի նուազումը միայն կը լայն Միեւնոյն ատեն սակայն յիշեալ զօրքերուն արձակումը և առնոց տեղ քիչ թւով պահեստի զօրքեր յաջորդելը Մակեդօնիոյ մէջ զինուորական իսկական զօրացումը կը նշանակէ:

Իջարի պաթալիօնները կը բազմանան տեղական մահմետական Մակեդօնացիներէ, որոնք 24 ժամուան մէջ կրնան կանչուիլ, զինուորի և պետք եղած թուական պատրաստ են: Իսկ պահեստի զինուորները ընդհակառակը, կը հաւաքին խիստ հեռուոր յաւելուածական նահանգներէ, ոմանք ֆոքր-Ասիայէն և առնոց հաւաքմանը համար հարկաւոր է 12-էն մինչև 21 օր: Ահա թէ թիւրքերան որ հակառակ ֆիւնանսական վատ դրութեան և ցոյց տուած խաղաշատիական ապահովութեան կը շարունակէ իր սխիթման թիւրք պատերազմական միջոցները Մակեդօնիոյ մէջ:

Ռուսական ռովէզոյ լրագիրը, հետեւեալ հետաքրքրական տողերը կը գրէ Պալքանան գործերու նկատմամբ:

Ընդհանրապէս, Քլուենքէն վերջը, մեծ կռիւներ կարելի է սպասել պալքաններու մէջ, մինչև իսկ այն պարագային երբ որ Սուլթանը ջանայ, զինքը շրջապատող անձերու և առհասարակ ամբողջ մահմետականութեան մէջ, պատերազմատիրական ձգտումները կասեցնել: Ներկայ անբնական դրութեան մէջ ուր 250000 հաւաքուած զօրք կը գտնուի, չըստանալով կառավարութենէ պետք եղած պաշարը, ու զօրքերուն և տեղական ազգաբնակչութեան մէջ ներմուծուելի գոյութեան կուէն վերջը՝ հիւանդ վիճակի մէջ գրտնուող Մակեդոնական խնդիրը այլևս իր բաւարար լուծումը պիտի պահանջէ: Հիմա վստահօրէն կարելի է ըսել թէ հունքը աւելի աչդեց քան Ռուսիոյ և Աւստրիոյ գիւնադիտական դիմումները:

պալքաններու առերևոյթ հանդարտութեանը համար, բայց այս հանդարտութիւնը առժամանակեայ է: X. X.

Սօֆիա 16 Յուլիս.

ԼԱՍԿԱՆՆԵՐՈՒ ՊԻԹԻՆԿՈՒՐ Ռուսուքի մէջ.

Վերջապէս Ռուսուքի ոչայ երիտասարդութիւնը՝ ալ բողոքեց րիւսաւորացիներու դէմ: Քանի մը քուտներ, որոնք ամեն ժամանակ Ռուսուքի հայ հասարակութեան կողմէ արհամարհուած ըլլալու միակ արժանիքը կը ներկայացնեն, ուղեցին օգտուելի վերջին գէպքերէն՝ ցոյց տալու համար թէ իրենք դեռ գոյութիւն ունին: Սակայն ժողովը ինչու ամառուոր ապտակէն շմուրած, այդ խնդրերը կրկին գացին զարգարելու աստիճանէ մտնելու արդար շարքը:

Բեզգիններու ուրիշ ինկար վերջապէս տեղի ունեցաւ անցեալ կիրակի (թէ և նախընթաց կիրակի օրուան համար ծանուցուած էր, բայց կերակ թէ միայն ճանճերուն ներկայութիւնը բաւական չհամարուելով՝ շարժման մը յետաձգուած է):

Ռուսուքիներուն լուծանօթ ինքի մը՝ ալքօրի անընդհատ ազդեցութեան ենթարկուող իր փրտած ուղեցին բաւական զօր կուտայ յեղափոխական անցեալ գործունէութեան վրայ տեսութիւն մը ընելու համար: Բագոսի յերմեռանդ երկրպագու հասնախօսին ցնդարանութիւնները միմիայն ծիծաղ պատճառեցին ներկայ դատուող հետաքրքրներու:

Այս մեծ յաջողութենէն արջիւ, ողորմելի ուրիշ ինկար ակելի ողորմելի կազմակերպողները բեմ կը հրաւիրեն հանրածանօթնախկին յիմարագիրը, որ իր կարգին իրեն յատուկ տարածութիւններով կուգայ մէկ նոր ապացոյցը տալու իր մտաւոր կարողութիւններուն խանդարուած ըլլալուն:

Ասով կը փակուի հասնախօսաներու շարքը և մէկ թէ երկու ձայնով կը նարուի յանձնախումբ մը ու կորոշուի պարտաւար իրեներու զարկել յեղափոխականներուն:

Չենք գիտեր թէ ուրիշները ինչ բանի կը յատկացնեն այդ թուղթի կտորները, բայց Հնչակեան կուսակցութեան կեդրոնին զրկուածներուն՝ ուրիշ թաղը արդէն յայտնած ենք մեր նախորդ թիւերուն մէջ:

Այս քանի մը տողերէն վերջը, հարկ կը համարենք հետեւեալ յայտարարութիւնը ընել:

Ոչայ իրիտասարդութեանս անունը անտօթիարար շահագործող իւրեղները տարածայնածին որ Հնչակեան Մասնա իւրը իր թէ սպառնալիք ըրած ըլլալ թաղական խորհուրդին, արդի իր և համար բողոքի ուրիշ ինկարը:

Մենք կը փութանք յայտա-

րարել թէ այդ տեսակ սպառնալիք չէ եղած, ո՛չ Մասնաճիւղին կողմէ պաշտօնապէս և ո՛չ Վարչութեան ուէ մէկ անդամի կողմէ առանձնապէս:

Ընդհակառակը, Հնչակեանները կը փափաքէին որ այդպիսի հրապարակային ժողով մը առիթը ընծայէր Ռուսուքի հայութեան հասկնալու թէ, որոնք են Հնչ. Կ. թիւնը քարկոծելի փորձողները, և պատմական դարձած ուրիշ ինկարը արդէն իրովին արդարացուց մեր յոյսերը:

ՍՍՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ ԶԱՐԵՆ ԻՒԼԸ

«Միջառնայի Հայաստան» թիւ 10-ին մէջ կը կարգանք:

Պերքաբլթի առաւօտ, յուլիս 7, ժամը 11-ի ատենները Տըսլի և Տանա փողոցներու անկիւնը՝ երկու ոճրագործ, գաղտնագող յարձակեցան Պր. Սապահ-Գիւլեանի վրայ որ տպարանէն փոսթ օֆիս կերթար: Չորս գնդակ պարպուեցաւ վրան՝ որոնցմէ մին միայն խորապէս մխուած է կոտակին մէջ: Ոճրագործներէն մին ձերբակալուած է, իսկ միւսը թեթև կաւքով մը, որ իրենց համար կանխաւ պատրաստուած է եղեր, խոյս տուած է: Չերբակալուածը Սամուէլ Կիւլեան կը կոչուի, նիւպրիփորթէն, ընկել Արապկերցի է: Ինքը չի ճանչնար զեր Պր. Սապահ-Գիւլեանը, իւր մեղսակցը ծանօթ է և այն իրեն մատնանիւ չի:

Պր. Սապահ-Գիւլեան անմիջապէս կը փոխադրուի քաղաքի հիւանդանոցը, ուր տեղ կը խնամուի: Բժիշկները խիստ վտանգաւոր չեն գտներ իւր վէրքը՝ թէ և զնդակ մէջն է: Առայժմ այս փոքրիկ տեղեկութիւնները կարճանագրենք այստեղ, ցուցնելու համար թէ Տ-Ս ամիսէ ի վեր ներքնապէս ծրարուած այս դաւը ինչպէս կատարուեցաւ վերջապէս, ինչոր վերջերս հրապարակապէս ալ կ'փառաբանուէր:

Ոճրագործը կը խոստովանի որ ինքը բնաւ չի ճանչնար Պր. Սապահ-Գիւլեանը, սակայն ոճրագործութեան հաւատացած էր, այնպէս համոզած էին: Հա՛ր, էլ ըսել որ այդ ոճրը՝ նախընթաց հաւատարիմ՝ գործակալներու մտքի մէջ երկար ատենէ ի վեր որոծուած փոխուէն էր, որ դուրս պոսթկաց Ինչպէս վերջոյ մտղերէն, նոյնպէս և մեր ստացած մասնատու տեղեկութիւններէն կը տեսնուի, որ այդ սպաննութեան փորձը արդէն ամիսներէ ի վեր Հերձուածի վարչներուն կողմէն ծրարուած գործ մըն էր, որ կատարուեցաւ վերջապէս:

Պարբերատարաբար ուրախներ ըսելու որ պր. Սապահ-Գիւլեանի վիճակը վտանգաւոր չէ և ընդհակառակը յուսալից, ուճրագործ:

Ս. Ս. գնդակը հանուած է:

ները ձերբակալուած են և արգարութիւնը երեան պիտի հանէ նաև անոնց ետև կանգնող ոճրերին հեղինակներն ալ:

Այդ գաղտնիքները պէտք է գիտնան թէ՛ որքան ալ այդ տեսակ ստոր ու ցած միջոցներու դիմեն, Հնչ. Կուս. ը միանգամ ընդ միշտ որոշած է զիրենք ծածկող միջոցներէն շրջը պատուել և Հնչ. Գործիչները, հակառակ իրենց դէմ յարուցուած արգելքներուն, պիտի շարունակեն կատարել իրենց վրայ ծանուցող պարտականութիւնները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նկատելով որ Բուլղարիա-Ռումանիայի և Ամերիկա, ի Պատ. Ժողովին շրջաբերականները Հնչ. Կուսակ. Կեդրոնական Վարչութեան լուս ընծայած մի շարք շրջաբերականները, որոնցմով ներքին մանրամասն կերպով յայտնել են իրանց փաստերն ու վճիռները կուսակցութիւնից արտաքսուած Ալքարական դաւադիր խումբակի նկատմամբ՝ մենք (Կովկ. և Ռուս. ընդհ. Պատգ. Ժողով) աւելորդ համարեցինք կանգ առնել նորից փաստերը մի առ մի թրուելու վրայ, գալիս ենք միայն հրապարակաւ յայտնելու, որ յիշեալ Ալքարական խումբակի վարմունքը խիստ կերպով դատապարտելի, գտնուած ենք նոյն իսկ դաւաճանական ընդդէմ Հայ Յեղափոխութեան:

Աչքի առաջ ունենալով նաև Հմայակ Խուչուրեանի դաւադիր ընթացքը, որը ապացուցուած է վերոյիշեալ շրջաբերականներով, Կովկ. Ռուս. ընդհ. Պատգ. Ժողովը յայտնում է, որ նա, (Հմ. Խուչուրեան) սեէ կապ և առնչութիւն չի կարող ունենալ Կովկ. և Ռուս. Հնչ. Կուսակցութեան Կազմակերպութիւնների հետ:

Յայտնում ենք նաև իրիտուութիւն ընդերքի, որ Կովկ. և Ռուս. Կազմակերպութիւններն վերջին տարիս խիստ զգալի յառաջդիմութիւններ արել են և որ նրանք հաւատարիմ 15 տարուայ իրանց դաւանած սկզբունքներին և Հնչ. Գործիչն արանից յետոյ ևս առանց մի բոլոր իսկ յետ նա յիշու, կը խոյսնան դէպք առաջ դէպի Գործ:

Իդիմաց Կովկ. և Ռուս. Հնչ. Յ. Կ. Ընդ. Պատգ. Ժողովի

Նախագահ՝ Հրահատ Կամար

Քարտուղար՝ Հմայակ Արամեան

1908 Յուլիս 5. (ԿնիՔ)

Ա. . .

Отговорникъ: Степанъ П. Степанянъ

Печатница В. Н. Маджмевъ — Русо.